Բոգդան Բ. Աթանեսյան[1]

Հայաստանը «ժողովրդագրական ձմռան» պայմաններում[2]

2024 թ. հունիսի սկզբին ամերիկյան հեղինակավոր *The Wall Street Journal* հանդեսը հրապարակել է մի նյութ, որում, վկայակոչելով փորձագետների հաշվարկները, նախազգուշացրել է մոլորակի վրա, այսպես կոչված, «*ժողովրդագրական ձմռան*» գալու մասին*:*

Հրատարակության համաձայն՝ աշխարհում ծնելիության մակարդակը կտրուկ նվազում է ինչպես զարգացած, այնպես էլ՝ անապահով երկրներում, ինչը նախկինում չէր նկատվում: Եթե հարուստ երկրներում (ԱՄՆ, Կանադա, եվրոպական երկրներ, Ճապոնիա, Ավստրալիա) ծնելիության անկում է գրանցվում սկսած անցյալ դարի 70-ական թվականներից, ապա նույն միտումն այժմ նկատվում է գրեթե բոլոր երկրներում, որոնցում նախկինում հետևողականորեն արձանագրվում էր բնակչության բնական աճ: *The Wall Street Journal-ը* հայտնում է, որ նույնիսկ Հնդկաստանը, որը 2023 թ. դարձավ մոլորակի ամենախիտ բնակեցված երկիրը, գրանցում է վերարտադրության մակարդակից ցածր ծնելություն: 2023 թ. տարեվերջին ծնելիության մակարդակը ՄԱԿ-ի կանխատեսումից ցածր էր Չինաստանում 16%-ով, Եգիպտոսում՝ 17%-ով, ԱՄՆ-ում՝ 4%-ով: Իսկ բնակչության աճի աֆրիկյան նախկին ռեկորդակիր Քենիան դեռ 2022 թ. ՄԱԿ-ի կանխատեսումների համեմատ գրանցել էր 18%-ով ցածր տարեկան ծնելիության մակարդակ:

2017 թ. ծնելիության համաշխարհային մակարդակը (մեկ կնոջ երեխաների միջին թիվը) կազմել էր 2,5: Այնուհետև ՄԱԿ-ը կանխատեսում էր, որ մինչև 2020-ականների վերջ այդ ցուցանիշը կնվազի մինչև 2,4-ը, սակայն արդեն 2021 թ. այն հասել է 2,3-ի: Մի շարք փորձագետներ, ընդհանուր առմամբ, կարծում են, որ իրական ծնելիությունը աշխարհում 10–20%-ով զիջում է ՄԱԿ-ի տվյալներին: Փենսիլվանիայի համալսարանի ժողովրդագրության մասնագետ Խեսուս Ֆերնանդես-Վիլավերդեն ասել է, որ 2023 թ. համաշխարհային ծնելիությունը առաջին անգամ իջել է վերարտադրության մակարդակից: Սա նշանակում է, որ նույնիսկ խիտ բնակեցված աղքատ երկրները չեն կարող ապահովել մոլորակի բնակչության գլոբալ աճը, ինչպես որ այն տեղի էր ունենում վերջին 50 տարիների ընթացքում:

---

[1] Հրապարակախոս, վերլուծաբան, վավերագրող ռեժիսոր: Հեղինակ է ավելի քան 1000 լրագրողական և քաղաքական-վերլուծական հոդվածների և 400 հեռուստատեսային վավերագրական տեսահոլովակների: Աշխատել է «Հ1», «ԱՐ», «Երկիր Մեդիա» հեռուստաընկերություններում: Նա համագործակցել և եղել է «Голос Армении», Aysor.am, Voskanapat, «Ազատ Արցախ» և այլ պարբերականների ու լրատվական կայքերի թղթակից:

[2] Հոդվածը բերվում է թարգմանաբար՝ ռուսերենից: Բնագիրը խմբագրություն է ներկայացվել 08.06.2024 թ.:

Արդյունքում առաջանում է երիտասարդների և տարեցների սերունդների հարաբերակցության անհավասարակշռություն: Դեռևս 2023 թ. *The Economist-ը* գրել էր, որ այս փուլում գրեթե բոլոր երկրներն «*արագ են ծերանում*»՝ տարեցտարի ծնելիության գործակցի նվազման պատճառով: Այսպիսով, թերթի տվյալներով, այս առումով իրավիճակն ուղղակի աղետալի է Ճապոնիայում, Իտալիայում, Բրազիլիայում, Մեքսիկայում և Թաիլանդում: Այս ցուցակում Լատինական Ամերիկայի և Արևելյան Ասիայի երկրների առկայությունը ցույց է տալիս, որ երիտասարդ, ակտիվ բնակչության թվի նվազումն ընդգրկում է ոչ միայն բավականին բարեկեցիկ երկրներ և հասարակություններ, որտեղ սոցիալական հոգեբանությունը երկար տարիներ ձևավորել է դասական ընտանիքների ստեղծման և արդյունավետ վերարտադրության թույլ պահանջարկ: Ըստ երևույթին, չգիտես ինչու, այժմ մտավոր արժեքների զանգվածային անկում է տեղի ունենում աղքատ երկրներում, որտեղ մինչև վերջերս բնակչության վերարտադրությունն անընդհատ զարգանում էր՝ չնայած սոցիալական դժվարություններին, կլիմայական և բնապահպանական անբարենպաստ պայմաններին և, նույնիսկ, պատերազմներին:

Համաշխարհային աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում հետաքրքիր է *The Wall Street Journal-ի* այն նկատառումը, որ բնակչության թվի նվազումը հանգեցնում է տվյալ երկրի գլոբալ ազդեցության նվազմանը: Սա «*հարցեր է առաջացնում գերտերությունների՝ ԱՄՆ-ի, Չինաստանի և Ռուսաստանի երկարաժամկետ կարգավիճակի վերաբերյալ*»: Այս երկրները նույնպես սրընթաց ծերանում են, և աշխատունակ ու ակտիվ բնակչության ռեսուրսի կրճատման պատճառով իրենց աշխարհաքաղաքական հավակնությունները բախվում են համապատասխան ժողովրդագրական ցուցանիշներով ապահովման խնդրին:

Այս առումով պետք է նշել, որ ամերիկյան ազդեցիկ հրատարակության բարձրաձայնած խնդիրը նոր չէ և վաղուց է անհանգստացնում երկրագնդի առանցքային աշխարհաքաղաքական դերակատարներին: Նրանցից յուրաքանչյուրը յուրովի է ձգտում պաշտպանվել «*ժողովրդագրական ձմռան*» բացասական միտումներից: Այսպես. Չինաստանը փորձում է խնդիրը լուծել՝ խթանելով ներքին ծնելիությունը, ինչը 10-20 տարի առաջ վարչական ու իրավական մեթոդներով խստորեն նվազեցրել էր: ԱՄՆ-ը և եվրոպական երկրները, ընդհակառակը, ձգտում են ծածկել երիտասարդ բնակչության պակասուրդը սահմանված որակավորումներին համապատասխանող ներգաղթյալների ինտեգրման միջոցով: ԱՄՆ-ն ունի այս եղանակի ամենահարուստ փորձը, և, հետևաբար, Միացյալ Նահանգներին հաջողվում է համեմատաբար արդյունավետ կերպով երիտասարդ բնակչության նվազող հատվածը համալրել դրսից բերվող ներուժով: Ռուսաստանի Դաշնությունն, իր հերթին, փորձում է կիրառել համակցված մեթոդ, սակայն, դատելով վիճակագրությունից և բաց տվյալներից, նման գործողությունների

արդյունավետությունը կասկածելի է: Մի կողմից, չնայած պետության խթանող սոցիալական ծրագրերին, բնիկների վերարտադրողական աճը շարունակում է ցածր մնալ, իսկ մյուս կողմից՝ հետխորհրդային տարածքի հիմնականում մահմեդական երկրներից ժամանող միգրանտների ինտեգրման գործընթացը «կաղում է»:

Այսպես թե այնպես, ժողովրդագրական խնդիրը դառնում է մոլորակի գլոբալ աշխարհաքաղաքական իրավիճակի էական գործոն: Ի վերջո, խոսքը աշխատուժի, մտավոր ակտիվների, տնտեսական կենսունակության և ռազմական ռեսուրսների մասին է: Այս բոլոր բաղադրիչները հավելյալ լրացնելու անհրաժեշտությունը պահանջում է համապատասխան քայլեր ցանկացած պետության կողմից: Փորձագետների կանխատեսումները համընկնումեն այն հարցում, որ մոտ ապագայում մարդկային ներուժը կդառնա ամենակարևոր գործոնը երկրների գոյատևման և հաջողության համատեքստում:

Այս լույսի ներքո պետք է ընդգծել, որ շատ բարդ տարածաշրջանում գտնվող Հայաստանի համար հարցը գոյութենական բնույթ է կրում: Հայաստանի բնակչությունը 2023 թ. վերջին կազմում էր 3.004 հազար մարդ: Ըստ վիճակագրության՝ վերջին 4 տարիների ընթացքում բնակչության աճը եղել է կայուն՝ տարեկան 0,36%, սակայն 2025 թ. սկսած բնակչության փոփոխությունների դինամիկան արդեն կընթանա հակառակ ուղղությամբ: Դա կլինի հավաքական առումով ծնելիության անկման, մահացության աճի և երկրից բնակչության արտահոսքի հետևանք: Ի լրումն աշխարհում առկա ընդհանուր միտումի, Հայաստանում նմանատիպ դինամիկան ակնհայտորեն խթանում են 2020–2022 թթ. իրադարձությունները՝ պատճառելով արական սեռի և վերարտադրողական տարիքի քաղաքացիների զգալի մասի կորուստ: Միևնույն ժամանակ, վերոնշյալ կանխատեսումները հաշվի չեն առնում Հայաստանում արցախցի փախստականների առկայության փաստը: Եթե նրանց զգալի մասը ստանա Հայաստանի քաղաքացիություն, միջնաժամկետ հեռանկարում ՄԱԿ-ի ցուցանիշները Հայաստանի համար զգալի փոփոխություններ կկրեն, բայց երկարաժամկետ հեռանկարում բնակչության նվազման դինամիկան անշեղորեն կաճի: Ըստ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի տվյալների՝ մինչև 2050 թ. ՀՀ բնակչությունը կնվազի մինչև 2.700 հազար մարդ, իսկ 2075 թ.՝ 2.264 հազար մարդ: Այնուհետև, թվերի անկումը կշարունակվի և մինչև 2100 թ. այն կհասնի 1.848 հազարի:

Բաց և հավաստի տեղեկատվության բացակայության պատճառով դժվար է որոշել, թե արդյոք երկրի կառավարությունը և համապատասխան կառույցները մշակում են համապարփակ ծրագիր՝ նվազեցնելու ժողովրդագրական ռիսկերը Հայաստանի համար: Սակայն, դատելով իշխանության առանձին քաղաքական գործիչների հայտարարություններից, Հայաստանի ներկայիս իշխանությունն առանձնապես չի հավատում բնակչության ժողովրդագրական աճը խթանող երկարաժամկետ ծրագրերի

արդյունավետությանը: Թերևս ծանր իրավիճակից ելքերի որոնումների լույսի ներքո նախապատվությունը տրվի բնակչության արհեստականորեն ավելացնելու տարբերակին՝ անապահով երկրներից ներգաղթյալների ներգրավմամբ: Օրինակ, ՔՊ իշխող կուսակցության պատգամավոր, ՀՀ առողջապահության նախկին նախարար Արսեն Թորոսյանը վերջերս հայտարարեց, որ Հայաստանը ժողովրդագրական խնդիրը լուծելու այլ ճանապարհ չունի, բացի այլ երկրների քաղաքացիների ընդունելուց. *«Ես վստահ եմ, որ մենք կարող ենք բարելավել մեր ժողովրդագրությունը ներգաղթի միջոցով, այլ տարբերակ չկա: Մեզ շատ մարդիկ են պետք, որ Հայաստան գան, և ակնհայտ է նաև, որ այդ մարդիկ հայ չեն լինելու: Հայեր կլինեն, իհարկե, բայց ոչ այնքան լավ երկրներից»:*

Պատգամավոր Թորոսյանի խոսքերի հետ կապված հարկ է հիշատակել բրիտանական *The Times* հանդեսի այն աղմկահարույց հոդվածը, որտեղ նշվում էր, որ Միացյալ Թագավորությունը ինտենսիվ բանակցություններ է վարում պաշտոնական Երևանի հետ՝ երրորդ երկրներից միգրանտներին Հայաստան տեղափոխելու հնարավորության շուրջ: Հիշեցնենք, որ խոսքը, այսպես կոչված, «ռուանդական սխեմայի/ծրագրի» մասին է (առաջին երկիրը, որը համաձայնություն է տվել Լոնդոնին, բայց դեռ չի սկսել կատարել իր պարտավորությունները, Ռուանդան էր), ըստ որի՝ Լոնդոնը ցանկանում է Միացյալ Թագավորությունում հաստատված անօրինական ներգաղթյալների որոշ մասին վերահղել երրորդ երկրներ՝ իրենց հայրենիք վերադարձը բացառելու պայմանով: Ըստ *The Times-ի* ՝ հենց նման բանակցային օրակարգով էր, որ 2023 թ. սեպտեմբերին Երևան էր եկել Թագավորության փոխարտգործնախարար Լեո Դոքերտին: Այս բանակցությունների մասին հայ հանրությունը տեղեկացավ միայն ընթացիկ տարվա գարնանը: Մամուլի բազմաթիվ հարցումներին հանրապետության ԱԳՆ-ն պատասխանել էր կարճ հաղորդագրությամբ, որը լիովին չի պարզաբանում հարցը. *«Հայաստանը և Մեծ Բրիտանիան ունեն քաղաքական երկխոսության լայն օրակարգ, սակայն* [The Times] *հրապարակման մեջ բարձրացված կոնկրետ հարցի շուրջ առարկայական և տեխնիկական բանակցություններ չեն եղել»:* Պատասխանից կարելի է եզրակացնել, որ, իրականում, Մեծ Բրիտանիայից առաջարկ է ստացվել ապօրինի ներգաղթյալների վերաբերյալ, սակայն այն դեռ հայկական կողմի քննարկման փուլում է:

Հաշվի առնելով այս և այլ կողմնակի տվյալները՝ կարելի է եզրակացնել, որ պաշտոնական Երևանը մտահոգված է հանրապետությունում սպասվող ժողովրդագրական անկման խնդրով և վերլուծում է խնդրի լուծման զանազան տարբերակներ՝ ընդհուպ մինչև արմատական, բայց ոչ այնքան հանրամատչելի միջոցների կիրառում, որոնց մասին ակնարկել է իշխանությանը մոտ կանգնած պատգամավորը: Այնուամենայնիվ, ղեկավարությունը և համապատասխան գերատեսչությունները իրենց հաշվարկներում պետք է ցուցաբերեն առավելագույն

զգուշավորություն՝ հաշվի առնելով բացասական հետևանքների և գոյութենական վտանգների զանգվածը, որ բերում է ներգաղթային հոսքերի «յուրացման» գործընթացը փոքր երկրների համար: Այս տեսանկյունից Հայաստանի համար *«ժողովրդագրական ծմեռը»* հաղթահարելու ամենաօպտիմալ մեթոդը կարող է լինել ներկայիս բնակչության վերարտադրությունը խթանող լայնածավալ նպատակային և համակցված սոցիալական ծրագրերի մշակումն ու ֆինանսավորումը: Միաժամանակ անհրաժեշտ է ավելի խորն ուսումնասիրել հայոց հայրենադարձության հնարավորություններն ու անհերքելի առավելությունները: